ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց հայրենիքի եւ ընտանիքի գաղափարը Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին (1991–2019) իր արտացոլումն է գտել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակություններում, որոնցից կարելի է առանձնացնել «Էջմիածին» ամսագիրն ու «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը։ Նրանցում այս երկու կարեւորագույն հիմնախնդիրները բնութագրվել են ոչ միայն այս շրջանի Ամենայն Հայոց Կաթողիկոսների՝ Վազգեն Ա.-ի, Գարեգին Ա.-ի եւ Գարեգին Բ.-ի սուրբծննդյան, զատկական, Ս. Էջմիածնի, Հոգեգալստյան տոներին, մեռոնօրհնության ուղերձներում, ինչպես նաեւ տարբեր եկեղեցիներում ու տարբեր առիթներով խոսված քարոզներում, հոբելյանական, ձեռնադրության եւ եկեղեցիների օծման ժամանակ ասված խոսքերում, այլեւ պատմաբանասիրական, փիլիսոփայական եւ այլ բնույթի հոդվածներում։ Ըստ այսմ՝ հայրենիքի գաղափարի վերաբերյալ հայոց երեք հայրապետների արտահայտած մտքերն ի մի բերելով՝ կարելի է ներկայացնել հայրենիքի հետեւյալ ընդհանրական գաղափարը։

Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելավայրն է, սակայն ամեն մի ապրելավայր դեռ Հայրենիք չէ։ Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ պատվում է ժողովրդի պատմամշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններով, նախնիների սուրբ գերեզմաններով, երբ սրբագործվում է թշնամիների դեմ տարած հաղթանակներով եւ նվիրյալ հերոսների թափած արյամբ, երբ ձեւավորվում են ազգային բնավորության գծերը, նկարագիրը, ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկություններն ու ազգային ինքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ է մտնում բանահյուսական երկերով՝ առասպելներով, դյուցազնավեպով, երգերով ու հեքիաթներով, հարազատանում հոգեպես, երբ

ժողովուրդը դառնում է հոգեւոր ամբողջություն, երբ «հող» հասկացությունը վերածվում է «տուն» հասկացության, իսկ «տուն»-ը՝ դառնում «երկիր» ու «Հայրենիք» եւ մտնում ցեղի արյան ու գենի մեջ՝ որպես նրա գոյատեւման հիմնական պայման։

«Մենք՝ իբրեւ Հայոց հայրապետ, մեր սեպուհ պարտքը կնկատենք անդադար հնչեցնել, հազար խոսքերով, հազար ձեւերով լսելի դարձնելու համար մեր օրերու հոգեւոր-ազգային կյանքի գերագույն ճշմարտությունը, թե հայության միակ ապահով խարիսխն աստվածակառույց Սուրբ Էջմիածինն է եւ հայ հողը հայրենին, մեր Սուրբ Հայրենիքը՝ մայր Հայաստանը, հայ ժողովուրդը, Հայոց պատմություն իրարմե անբաժան են եւ միասին անբաժան են Սուրբ Էջմիածնեն»,— նշել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, ապա հավելել,— Հայրենիքը առաջին հերթին դավանանք է, երկրորդ հերթին՝ լեգենդ։ Հայրենիքը Աստծու նախակերպարն է։ Թող մարդը մանկուց սովորի հանձին հայրենիքի տեսնել Աստծու կերպարը, «Հայրենիքը պատահական հրաշք չէ, այլ անանց հրաշք, բնության ու պատմության հրաշք»[1]։

1997 թ. սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության 6-րդ տաեղարձի առթիվ, իր հայրապետական մաղթանք-աղոթքում «Հայրենիք» հասկացությունն այսպես է բնութագրել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը. «Հայրենիքը պատկերն է հայության, Հայրենիքը միայն հողը չէ։ Հայրենիքի հողի մեջ իմ ու Ձեր հայրերի թողած սրբություններն են, մշակույթի գործերն են, նրանց արյունն է, նրանց ոսկորներն են։ Հայաստանը պատկերն է մեր ժողովրդի կյանքին, մենք մաս եւ բաժին ենք, միս ու ոսկոր այդ ժողովուրդին»[2]։ Շարունակելով իր միտքը՝ նա գրում է. «Այսօր Հայաստանը հայուն պատկերն է։ Ինչ որ ազնվագույնը ունիս քո մեջ, փոխանցիր քո հայության հավատքին, լեզվին, մշակույթին, ազգային արժանապատվության գիտակցությանը։ Քո կնիքը, դրոշմը դիր Հայրենիքիդ վրա։ Առաջ չէինք կրնար, եթե ուզեինք, հիմա կրնանք եւ կարող ենք անպայման, եթե ուզենք։ Հայրենիքը այսօր կյա՛նք է, կյա՛նք։ Հայրենիքը այսօր պատմության գիրքեր են եւ պատկերներ են, հայրենիքը ժողովուրդն է, Հայաստան է, Արցախ է։ Հայրենիքն այսօր ինքն իր տերն է»[3]։

---

[1] Վազգեն Ա., *Երկերի ժողովածու. քարոզներ եւ խոսքեր, հտ. Բ., էջ 18։*

[2] Գարեգին Ա., *Հայրենիքը պատկերն է հայության, գք. Ա., էջ 249, 250։*

[3] *Անդ, էջ 577։*

«Հայրենիքը մենք պիտի սիրենք այն պարզ պատճառով, որ մերն է՝ մեր հայրերի արյամբ ու քրտինքով նվիրագործված եւ մեզ ավանդված։ Հայրենիքով է զորեղ յուրաքանչյուրը՝ իբրեւ ազգի զավակ, իբրեւ կրողն ու շարունակողը հայրենյաց ժառանգության, իսկ զորությունը հայրենիքի մեր ժողովուրդն է՝ ի հայրենիս եւ ի սփյուռս միասնաբար»,— ընդգծել է հայոց հայրապետ Գարեգին Բ.-ն[4]։

Հայոց ավանդապահ ընտանիքի գաղափարը եւս լայնորեն լուսաբանվել է «Էջմիածին» ամսագրի եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի էջերում։

«Էջմիածին» ամսագրի 2010 թ. է. համարում տպագրված է Լիանա Քենակալյանի

«Ներընտանեկան հարաբերությունների նկարագիրը Պ. Պռոշյանի երկերում» հոդվածը[5], որտեղ հանդես գալով բանահավաքի դերում՝ կենցաղագիր հեղինակը, անձնական դիտարկումների շնորհիվ, կարողացել է ազգագրական եւ բանահյուսական հարուստ նյութ կուտակել։ Հոդվածում վերլուծված են իրենց ինքնատիպությամբ եւ լեզվաոճական յուրահատկությամբ առանձնացող Պերճ Պռոշյանի ստեղծագործությունները, որոնք հիմնականում վերաբերում են հայոց ավանդապահ ընտանիքներին։ Վերլուծված են ընտանիքի երկու հիմնական ձեւի՝ նահապետական մեծ ընտանիքի՝ գերդաստանի եւ դրանից տարանջատված փոքր ընտանիքների առտնին հարաբերությունները։ Այս ձեւերը միմյանցից էապես տարբերվում էին ինչպես տնտեսական ու իրավական հիմքերով, այնպես էլ՝ կազմով ու կառույցով[6]։

Պ. Պռոշյանի ստեղծագործությունների հիման վրա հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես նահապետական բարքերով ապրող գյուղացու համար դժվար էր ընդունել «ադաթի» դանդաղ անհետացումը եւ նոր բարքերի մուտքը[7]։ «Նահապետական հայացքներով օժտված մարդու համար դժվար էր ընդունել ժամանակների նման փոփոխությունը,— եզրակացնում է հոդվածի հեղինակը,— նախկինում հարս են բերել դեմքը փակ, եւ 7 տարի նրա դեմքը ոչ ոք չի տեսել, բայց այսօր ահա «հարսին

---

[4] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (2010–2019), հտ. Բ., էջ 443։*

[5] Լ. Քենակալյան, *Ներընտանեկան հարաբերությունների նկարագիրը Պ. Պռոշյանի երկերում, «Էջմիածին», 2010, հտ. է., էջ 32։*

[6] *Անդ, էջ 32, 33։*

[7] *Անդ, էջ 38։*

նստեցնում են հետները, հաց ուտացնում, 2 տարի չի անցնում, հարսը կեսուրից բարձր ա խոսում, հիմիկվան հարսները իրանց կեսուրների գլխին խանում են գալիս. մի բան դնելիս՝ նոթերը կիտում են, պնչները օխտը գազ կախ քցում», եւ այս ամենի ականատես մարդուն մնում էր միայն ասել. «Խեր ու բարաքյաթն էլ էն վախտն էր, սեր ու սոհբաթն էլ»։ Բարոյական նորմերն էլ այլեւս այն չեն թվում, ինչ որ առաջ։ Եւ այս ամենի հանդեպ անզոր գյուղացուն մնում էր միայն երկյուղ տածել վաղվա օրվա հանդեպ. «Վայ մեզնից հետո եկողներին, ջուրն եկել ա նրանց տարել, նրանք ավելի բեթար պտի ըլնին» եւ անցած օրերին երանի տալ. «ափսոս ժամանակ, անցկացած օրերին օր չի հասնիլ, մեր վախտն էլ մի վախտ էր թռավ էլ ձեն չի ընկնիլ»,— գրողի խոսքերով եզրափակում է հեղինակը[8]։

Ամփոփելով իր խոսքը՝ հեղինակը նշում է. «Պ. Պռոշյանի ստեղծագործությունները գեղարվեստական խոսքի, ժողովրդական բանահյուսության ու ազգագրական նյութերի համադրման փայլուն օրինակ են։ Նրա գեղարվեստական ժառանգության մեջ եղած ազգագրական վկայությունները մեզ հնարավորություն են ընձեռում վեր հանել ԺԹ. դարի երկրորդ կեսի եւ Ի. դարի սկզբների հայ հասարակության ընտանեկան կենցաղի, ներընտանեկան հարաբերությունների, տոների, քաղաքական, տնտեսական եւ սոցիալական իրավիճակի ազգագրական պատկերը»[9]։

«Էջմիածին» ամսագրի 2013 թ. Զ. համարում տպագրված է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ռիմա Միրումյանի «Ընտանիքը Խորեն Աշրգյանի քաղաքական տեսության մեջ (մեթոդաբանական տեսանկյուն)» հոդվածը։ Այստեղ ընդգծվում է այն միտքը, որ ընտանիքի եւ ընտանեկան հարաբերությունների հիմնահարցն առանցքային էր հայ ազգի քաղաքական մտքի համար՝ սկսած ԺԹ. դարից։ Վերլուծված են ընտանիքների վերաբերյալ ազատական եւ պահպանողական կողմնորոշում ունեցող հայ մտածողների տեսակետները[10]։ Հեղինակը հանգում է մի կարեւոր եզրակացության, ըստ որի՝ «ընտանեկան հարթության վրա անհիմն է ավանդույթների, կրոնական դավանությունների վրա հիմնված ազգային օրենսդրությունների եւ առանձին երկրների հասարակական

[8] Անդ։

[9] Անդ, էջ 39։

[10] Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, Ընտանիքը Խորեն Աշրգյանի քաղաքական տեսության մեջ (մեթոդաբանական տեսանկյուն), «Էջմիածին», 2013, հտ. Զ., էջ 56–66։

պրակտիկայի ու մարդու (կնոջ) իրավունքների ստանդարտների միջեւ հակասության հարուցման միտումը... Ապարդյուն եւ վնասակար են պատմության մեջ արմատավորված եւ ավանդույթներով ու կրոնով սրբագործված սովորույթների անսասանության «առասպելի» մերժման բոլոր ցանկությունները, քանզի ավանդական հասարակությունը ամենաամուր կազմակերպությունն է եւ առայժմ լիակատար չափով իրականացված հասարակության միակ ձեւը»[11]։

Հետաքրքիր բովանդակություն ունի «Էջմիածին» ամսագրի 2018 թ. Ա. համարում թարգմանաբար տպագրված Իվան Իլյինի «Ընտանիքի մասին (ընտանիքի նշանակությունը)» հոդվածը։ Այստեղ հանգամանորեն ներկայացված է «ընտանիք» հասկացության էությունը, ներընտանեկան հարաբերությունները եւ այլն։ «Ընտանիքը նախնական սուրբ դաշինքն է, որին մարդ դաշնակցում է անհրաժեշտությունից ելնելով։ Մարդը կոչված է կառուցելու այդ դաշինքը սիրո, հավատի եւ ազատության վրա, սովորելու բարեխիղճ սրտի առաջին շարժումները եւ ապա բարձրանալ մարդկության հոգեւոր միասնության հետագա ձեւերին՝ հայրենիքին եւ պետությանը»,— ասված է հոդվածում[12]։ Այս հոդվածում Ի. Իլյինը վերլուծում է՝ ա) ընտանիքի նշանակությունը մարդու եւ հասարակության համար ընդհանրապես, բ) ընտանիքի հոգեւոր առողջության պայմանները, գ) դաստիարակության հիմնական խնդիրները[13]։ Ընդգծվում է այն գաղափարը, որ առողջ ընտանեկան կյանքում մարդու հոգին վաղ մանկությունից հղկվում է, կոփվում, սովորում է մերձավորներին վերաբերվել հարգանքով ու սիրառատ ուշադրությամբ։ Ընտանիքը կոչված է ընդունելու, պահելու եւ սերնդեսերունդ փոխանցելու հոգեւոր-կրոնական, ազգային եւ հայրենասիրական ավանդույթները։ Երեխան ընտանիքում է սովորում հեղինակությունների ճշմարիտ ընկալմանը՝ ի դեմս հոր եւ մոր։

Ամփոփելով ընտանիքի մասին իր դատողությունները՝ ռուս հեղինակը եզրակացնում է. «Այսպիսով, ընտանեկան եւ ազգային ոգուց, ծնողների եւ նախահայրերի հոգեւոր-կրոնական իմաստավորված ըմբռնումից մարդու մեջ ծնվում եւ հաստատվում է սեփական հոգեւոր արժանապատվության զգացողություն. սա ներքին ազատության, հոգեւոր բնավորության եւ առողջ քաղաքացիության առաջին հիմքն է։ Հակառակը,

---

[11] *Անդ, էջ 66։*

[12] Ի. Իլյին, *Ընտանիքի մասին, «Էջմիածին», 2018, Դ., էջ 31–56։*

[13] *Անդ, էջ 27, 30, 31, 34, 45։*

անցյալն արհամարհելը, նախնիներին եւ հետեւաբար ժողովրդի պատմությունն անտեսելը ծնում է անպատասխանատու, ստրկական հոգեբանություն։ Իսկ դա նշանակում է, որ ընտանիքը հայրենիքի հիմքն է»[14]։

Այսպիսով՝ ընտանիքը մարդկության ողջ հոգեւոր մշակույթի, բայց նախ եւ առաջ հայրենիքի հիմքն է։

«Էջմիածին» ամսագրում տպագրվել է Հեղինե Ներսիսյան-Փանիկյանի Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիքը» գրքի գրախոսականը[15]։ Այդ հիրավի կոթողային աշխատանքը Խրիմյան Հայրիկը գրել եւ հրապարակել է դեռեւս 1876 թ. Կոստանդնուպոլսում։ Այն չի կորցրել իր արդիական նշանակությունը նաեւ մեր օրերում։ «Ժողովո՛ւրդ հայոց,— դիմում է նա իր ընթերցողներին,— քեզ համար նկարեցի դրախտի ընտանիքը..., ո՛վ դուք ընտանիք հայոց, ուղղեցե՛ք Ձեր ներկան ու ապագան, որ ուղիղ լինի, տնտեսեցե՛ք ներկան, որ ապագային հացը չի պակասի.... Դու ազնի՛վ եղիր ու ազնիվ ժողովրդոց բարի ու պարկեշտ ընտանիքի օրինակին հետեւի՛ր»։

Պոլսի պատրիարքական աթոռից հրաժարվելուց հետո «Վասպուրականի Արծիվը» նոր թափով սկսեց իր գրական գործունեությունը՝ հայացքն ուղղելով արեւմտահայության առօրյա հոգսերին, նրա անմխիթար ընտանեկան կյանքին։ Իր պատրիարքության շրջանում Մկրտիչ Խրիմյանն անձամբ ականատես եղավ ընտանիքների արատավոր կողմերին եւ ամենաարատավոր ամուսնական կյանքին, որի համար առատ նյութեր էին տալիս պատրիարքարանի դատաստանական խնդիրների արձանագրությունները[16]։ Ահա դրանց հիման վրա էլ նա գրեց 18 գլխից բաղկացած իր նշանավոր «Դրախտի ընտանիքը» գիրքը, որտեղ փաստերով վերլուծվել են հայոց նահապետական տունն ու ընտանիքը, «ամուսնության կամ ընտանեկան կյանքին խափանարար զեղծմունքները», կենակից ամուսինների իրավունքները, հարսանիքն ու պսակի խորհուրդը, հարսի ու փեսայի կոչումը, տղամարդու եւ կնոջ փոխադարձ պարտականություններն ու իրավունքները, զավակների ընտանեկան դաստիարակությունը, նրանց պարտականությունը ծնողների նկատմամբ, հայ նահապետական ընտանիքի երեցն ու իր պարտականությունները,

---

[14] *Անդ, էջ 45։*

[15] *Տե՛ս Հեղինե Ներսիսյան-Փանիկյան, Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք»-ը (հրատարակության 100-ամյակի առիթով), «Էջմիածին», 1976 թ., Ը.—Թ., էջ 26—30։*

[16] *Անդ, էջ 26։*

ընտանեկան պարտականություններն ու ազատությունը, ընտանեկան վիճակի փոփոխությունը, անկումը եւ բարգավաճումը եւ այլն։ Միաժամանակ հեղինակի եզրակացությունն այն է, որ ամուր եւ պատշաճ, օրինակելի ընտանիքը պետության հզորության հիմքն է։ Հայ ընտանիքն այդ ախտերից ազատելու, նրան բարոյապես բարձր տեսնելու մեծ հոգսն էր, որ առիթ դարձավ Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք» հրաշալի աշխատության աշխարհ գալուն։ Ժամանակի հայ հասարակությունը մեծ սիրով ընդունեց այս երկասիրությունը, եւ այն չի կորցրել իր նշանակությունը նաեւ մեր օրերում։ Լուսավոր, իմաստուն, ճշմարտացի հայացքներով լի է «Դրախտի ընտանիք»-ը,— եզրափակում է հեղինակը։ Այս աշխատանքը լավագույն օրինակ է նաեւ մեր օրերի ընտանեկան դաստիարակության համար[17]»։

«Էջմիածին» ամսագրի էջերում տպագրվել է ընտանեկան կյանքի եւ դաստիարակության համար շատ կարեւոր նշանակություն ունեցող հոդված՝ «Կաթոլիկ եկեղեցին կպառակտի հայրենադարձ հայ ընտանիքը» վերնագրով[18]։ Այստեղ ներկայացված է, թե ինչպես ԱՄՆ-ում՝ Նյու Յորքում, բնակվող Համբարձում Զոլաքյանի երեք զավակներին արգելեցին իրենց ծնողների հետ մեկնել Խորհրդային Հայաստան՝ իբրեւ հետեւանք այն դժբախտ իրողության, որ երեխաների մայրը 1942 թվականից ի վեր հիվանդանոցում էր։ Կաթոլիկ երկու հաստատությունները, որտեղ երեխաներն էին, չէին թույլատրում վերադարձնել նրանց իրենց ծնողներին։ Հոդվածը երեւան է բերում Ամերիկայում կազմակերպված դատավարության պատմությունն ու այն իրողությունը, թե ինչպես կաթոլիկ հաստատությունները չէին ուզում, որ հայ երեխաները հայեցի դաստիարակություն ստանան, փորձում էին նրանց դարձնել Կաթոլիկ Եկեղեցու սպասավորներ։

Հոդվածում գրվում է. «Դարեր շարունակ կաթոլիկ միսիոներները ճիգ ու ջանք չեն խնայել հայ ժողովրդի զավակներին կտրելու իրենց մայրենի եկեղեցուց, մայրենի հարազատ լեզվից ու հայրենիքից։ Նրանք, հայ ժողովրդի զավակների վզին փաթաթելով կաթոլիկ եկեղեցու դավանանքը, օտարացման, խորթացման ուղու վրա են հրել նրանց ու կտրել իրենց մայրենի լեզվից ու հայրենիքից։

---

[17] *Տե՛ս Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Ս. Էջմիածին, 2011։*

[18] *Հ. Զոլաքյան, Կաթոլիկ եկեղեցին կպառակտի հայրենադարձ հայ ընտանիքը, «Էջմիածին», 1948, Ա.—Բ., էջ 16—20։*

Հայ եկեղեցին միշտ էլ պայքարել է կաթոլիկ միսիոնարների բազմապիսի ոտնձգությունների դեմ՝ աշխատելով հայ ժողովրդի զավակներին հեռու պահել օտարացումից, խորթացումից եւ կապել նրանց հայրենի սրբազան հողի հետ»[19]։

Հոդվածագիրը որպես օրինակ նշում է ամերիկահայոց առաջնորդ Տիրան եպիսկոպոս Ներսիսյանի ելույթը դատարանում՝ ի պաշտպանություն հայրենադարձ Զոլաքյանի զավակների, բողոքն ու քննադատությունը ամերկյան կաթոլիկ հայրերի հասցեին՝ Զոլաքյանի ծնողական իրավունքները ոտնահարելու եւ նրա երեխաներին իրենց հայրենիքից զրկելու փորձի դեմ։ Վերջապես ամերիկյան դատարանի անարդարացի որոշման դեմ բողոքները տալիս են իրենց արդյունքը։ Զոլաքյանի զավակներին վերադարձնում են իրենց ծնողներին, որոնք, 45 տարի կտրված լինելով հարազատ հայրենիքից՝ Խորհրդային Հայաստանից, վերադառնում են հայրենիք՝ ձեռնամուխ լինելով իրենց երջանիկ կյանքի կերտմանը սրբազան հողի վրա[20]։

«Իզուր են ամերիկյան դատարանների ու ֆրանսիական իշխանությունների փորձերը հայ ծնողներին երեխաներից զրկելով ետ պահելու նրանց իրենց սիրասուն հայրենիքը ներգաղթելուց։

Զորեղ է հայրենիքի կարոտի անշեջ հուրը տարագիր հայ պանդուխտների սրտերում, ու անզոր են Հայ Հայրենիքի թշնամիները որեւէ միջոցով մարելու հայրենիքի սիրուց նրանց սրտերում բորբոքված հրդեհը»,— եզրափակում է հոդվածագիրը[21]։

Այսպիսով՝ էջմիածնի հրատարակություններում ընտանիքի ու ընտանեկան դաստիարակության մասին տպագրված հոդվածներով ցույց է տրվում հզոր հայրենիք կառուցելու եւ շենացնելու փաստը։

РЕЗЮМЕ

За время деятельности Третьей Республики Армении (1991—2019 гг.) вопросы армянской родины и семьи зачастую анализировались в публикациях ежемесячника «Эчмиадзин» и газеты «Христианская Армения»

[19] *Տե՛ս անդ, էջ 21։*
[20] *Անդ, էջ 21, 22։*
[21] *Անդ, էջ 22—24։*

Первопрестольного Святого Эчмиадзина. В настоящей статье обсуждаются проблемы родины и семьи, освещенные в вышеупомянутых изданиях.

Основной составляющей понятия родины являются патриотизм, принадлежность к христианской Апостольской Церкви, причастность к освободительной борьбе Арцаха и связь с армянской диаспорой. На страницах разных публикаций «Эчмиадзина» и «Христианской Армении» раскрывается сущность и особенность армянской семьи, эволюция ее развития, описание традиционных отношений внутри семьи, а также исключительная важность прочности семьи как основного звена, обеспечивающего крепость и силу самой родины.

SUMMARY

During the existence of the third Republic of Armenia (since 1991), the issues of the Armenian homeland and family have been often analyzed in the publications of “Etchmiadzin” monthly and “Christian Armenia” newspaper of the Mother See of Holy Etchmiadzin. This article discusses the problems of homeland and family, highlighted in the aforementioned publications.

The main components of the concept of homeland are patriotism, strongly linked to the ideology of Christianity of the Armenian Apostolic Church, involvement in the liberation struggle of Artsakh and ties with the Armenian diaspora. The articles of “Etchmiadzin” and “Christian Armenia” represent the essence and features of the Armenian family, evolution of its development, description of traditional relations within the family, as well as the exceptional importance of the inseparability of the family as an impetus for the strength and firmness of the homeland itself.